

համար խոստացուած վարձատրութիւնները, այս բոլորը գերազանցում է եօդին գիտութեամբ և գերազոյն հանգիստն է հասնում:

Այսեղ վերջանում է Բնագալազգի՝ Երեւոյի ուրեւորդ զուլար, որի անունն է Անբաթանիի եւ Գերագոյն Բրահմայի եօդա:

(շարունակելի)

Հ. Աճառեան

Կ Ա Ն Տ Ի Ի Մ Ա Յ Ա Բ Ա Ն Ո Ի Թ Ի Ի Ն Ը

Երբ մատեմատիկական ակնյայտութեամբ (և ոչ թէ որպէս հաւանական հիպոթեզ) ապացուցուեց, թէ ժամանակն ու տարածութիւնը *a priori* հայեցողութիւն են, այնուհետեւ դրանից՝ որպէս նախադրեալից, տրամաբանօրէն բղխում է, որ նրանք սուբեկտիւ են և ոչ թէ օբեկտիւ, իրական: Ոմանք կարծում են՝ թէ ժամանակն ու տարածութիւնը սուբստանցիոնէլ իրականութիւն են: Նրանք պատկերացնում են ժամանակը որպէս անիր հոսանք, որը զուրկ է օբեկտից և բովանդակութիւնից. իսկ տարածութիւնը որպէս մի տիեզերական անհունապէս մեծ և դատարկ տրիկը Նոքա (ժամանակն ու տարածութիւնը) գոյութիւն ունին (սակայն առանց ինչ որ իրական բան լինելու) միայն նրա համար, որ պատասպարեն ամբողջ իրականութիւնը, Այս հասկացողութեան նկարագրիցն ալգէն երևում է ժամանակի և տարածութեան այդպիսի պատկերացման անհեթեթութիւնը: Դրան կարելի է պատասխանել, որ նոյն՝ այդպիսի ժամանակն ու տարածութիւնը չեն կարող հնարաւոր փորձի առարկայ լինել. երկրորդ՝ եթէ ժամանակն ու տարածութիւնը արեւելաւոր սուբստանցիոնէլ իրականութիւն լինէին, այդ դէպքում ամեն ինչ կախուած կլինէր դրանցից և ոչինչ չէր կարող ոչ միայն դրանցից անկախ գոյութիւն ունենալ, այլև մտածուել: Այդ դէպքում անհնար կլինէր ինտելլիգիբիլ աշխարհի

ոչ միայն ճանաչելիութիւնը, այլ նաև գոյութիւնը, իսկ մենք ոչ մի իրաւունք չունինք ժխտելու նրա (ինտելիգիբել աշխարհի) գոյութիւնը։ Այսպիսով ժամանակն ու տարածութիւնը սուքստանցիոնէլ իրականութիւն ունին։

Բայց կարող են կարծել, որ ժամանակն իրերի յատկութիւն է կամ յարաբերութիւն։ Եթէ նա իրերի յատկութիւն կամ յարաբերութիւն լինէր, պիտի վերացուէր (аbстрahивоваться) մասնակի իրերից և նրանց յարաբերութիւններից։ Ճիշտ է, մեր երևակայութիւնը կարող էր ինքնուրոյնաբար ստեղծել մի այնպիսի բան, որ պարունակէր իր մէջ այդ յարաբերութիւնների և յատկութիւնների ընդհանուր գծերը, բայց նրանց ոչ մի հիմքով չի կարելի տարածել միւս գէպերի վրայ, որովհետև նրանք իբրև *aposteriori* էմպիրիկ գաղափարներ (այդ գէպքում նրանք էմպիրիկ կլինէին) կաշկանդուած կլինէին միշտ փաստական տուեալների իրական ներկայութեամբ։ Այդ գէպքում հնարաւոր չէր լինի ժամանակի և տարածութեան վրայ հիմնուած մատեմատիկական թեզիսների ապոգիկոս ճշմարտութիւնը և ապրիորիութիւնը, որովհետև մատեմատիկական թեզիսները պիտի վերացուէին և ոչ թէ կառուցուէին (конструировать)։ Մատեմատիկական կլինէր երևակայութեան ստեղծած մի խաբուսիկ ցնորք, որ նշանակութիւն չունի արտաքին իրերի նկատմամբ։ Այսպիսով անբացատրելի կմնար զուտ մատեմատիկայի, իբրև անհրաժեշտ և օրեկտիւ գիտութեան, փաստը, երկրորդ՝ եթէ ժամանակն ու տարածութիւնը լինէին իրերի յատկութիւն կամ յարաբերութիւն, այդ գէպքում անհնար կլինէր պատկերացնել ժամանակն ու տարածութիւնը առանց իրերի, իսկ հնարաւոր՝ իրերն առանց ժամանակի և տարածութեան, մինչդեռ բոլորովին հակառակն է։

Այսպիսով նրանք, որոնք ընդունում են ժամանակի և տարածութեան արսօլիւտ իրականութիւնը, — միևնոյնն է նորա նրանց սուքստանցիա են համարում, թէ իրերի յատկութիւն և յարաբերութիւն՝ ստիպուած են շեղուել փորձի սկզբունքներից։ Հերքուեց այսպիսով ժամանակի և

տարածութեան ռէալիստական հասկացողութիւնը: Մնում է միմիայն մէկ ուրիշ հասկացողութիւն, որը ամենաճշմարիտն է. մանաւանդ որ միայն այդ տեսութեամբ կարելի է բացատրել մատեմատիկայի իբրեւ *apriori* ինդուկտիւ գիտութեան փաստը.—այդ այն տեսութիւնն է, որ ժամանակն ու տարածութիւնը համարում է սուբեկտիւ հայեցողութեան ձեւեր: Տարածութիւնը բոլոր արտաքին զգայութեան երևոյթների ձևն է, այսինքն զգայութեան պայմանը, որի շնորհիւ միայն մեզ համար հնարաւոր են արտաքին օբեկտները: Ժամանակը ներքին զգայութեան ձևն է, այսինքն մեր և մեր ներքին հոգեկան վիճակների պատկերացողութեան ձևը:

Ներքին և արտաքին զգայութիւնների տարբերութիւնը սահմանուած էր Լօքից: Կանտի համար սակայն բոլորովին նոյն նշանակութիւնը չունի այդ սահմանումը, ինչ Լօքի համար էր: Երբ մենք մեր մէջ զգացածը և ըմբռնածը տարածականօրէն ենք պատկերացնում, նոր այդ դառնում են օբեկտներ մեզնից դուրս, ուրեմն արտաքին զգայութեան օբեկտները նախ և առաջ ներքին զգայութիւն են. դրանց մէջ աբսօլյուտ արմատական տարբերութիւն չկայ, ինչպէս Լօքն էր հասկանում: Բոլոր պատկերացումները, ունենան նրանք օբեկտ դրսում, կամ ոչ, նախ և առաջ հոգեկան վիճակ են, որոնք իբրեւ հոգեկան զգայութիւն են թարկուած են ներքին հայեցողութեան ձևական պայմանին,—այն է՝ ժամանակին. ուստի ժամանակը *apriori* պայմանն է ոչ միայն ներքին զգայութեանց այլ նրանց միջոցով նաև արտաքին զգայութեանց՝ այսինքն բոլոր երևոյթներին ընդհանրապէս: Այսպիսով նաև, ըստ Կանտի, զգայութեան աշխարհը մի շրջանն է միայն ներքին զգայութեան, մի ասպարէզ է նոյն և մի հոգու միական գործունէութեանը:

Մի անգամ արդէն, երբ ապացուցուեց ժամանակի և տարածութեան *apriori* զգայական զայեցողութիւն լինելը, դրանից այնուհետև հետևում է, որ նոյա նշանակութիւնը սահմանափակուած է միմիայն փորձի օբեկտ-

ներով, որ նրանց ամբողջ ֆունկցիան սպառում է զգայութեանց դասաւորմամբ, նրանք կարող են իրական նշանակութիւն ունենալ միմիայն հնարաւոր փորձի օրեկտների նկատմամբ, որովհետեւ նրանք *apriori* պայմանն են փորձի, — ուրեմն և փորձնական իրերին ընդհանրապէս։ Այսպիսով ժամանակն ու տարածութիւնը ունին «էմպիրիկ իրականութիւն», այսինքն օրեկտիւ նշանակութիւն փորձի առարկաների վերաբերմամբ։ Սակայն նորասուբեկտիւ գուրս ոչինչ են, նրանք չունին արսօլիւտ իրականութիւնը (մետաֆիզիքական իմաստով), ինչպէս տեսանք՝ նրանք չեն կարող լինել ինքնին իրերի յատկութիւն կամ յարաբերութիւն, և կամ սուբստանցիաներ, նրանք հետեւաբար չեն կարող նշանակութիւն ունենալ երեւոյթների աշխարհիւ գուրս ինքնին իրերի նկատմամբ, նրանք (ժամանակն ու տարածութիւնը) ինքնին իրականութեան վերաբերութեամբ «իդէալական են», այսինքն օրեկտիւ և իրական նշանակութիւն չունին։ Այս իմաստով է Կանտն ասում, որ «ժամանակն ու տարածութիւնն ունին էմպիրիկ իրականութիւն, և տրանսցենդենտալ իդէալականութիւն»։

Սակայն ժամանակի սուբեկտիւութիւնը չպիտի հաւասարեցնել զգայութեանց սուբեկտիւութեան. — զգայութիւնները յեղյեղուկ են, նրանց վրայ չի կարելի հիմնել *apriori* գիտութիւն։ Իսկ ժամանակն ու տարածութիւնը հիմք են սինտետիկ *apriori* իմացութեանց՝ մատեմատիկայի, որովհետեւ նրանք թէև հայեցողութեան սուբեկտիւ, բայց անհրաժեշտ և հանրապարտագիտ ինդուկտիւ ակտի օրինակարգութիւնն են. այդ իմաստով նրանք օրեկտիւ են։ (Ըստ Կանտի օրեկտիւութիւնն էլ հենց այդ է)։

Շատերը կարող են մտածել սակայն, թէ ընդունելով, որ ժամանակն ու տարածութիւնը սուբեկտիւ պատկերացման ակտի օրինակարգեալ ձևերն են և որ երեւոյթների աշխարհի այս ամբողջ պատկերը մեր հոգու ստեղծագործութեան ծնունդն են, մեր պատկերացումները, դրանով, իբրև թէ, հերքած չենք լինի, որ միաժամանակ և

Նրանք կարող են ինքնին իրականութեան ցոլացումը լինել, — չէ որ հնարաւոր է, որ մարդկային բանականութիւնը, ինչպէս Լայբնիցն է ընդունում, նախասահմանեալ ներդաշնակութեան շնորհիւ այնպէս կազմուած լինի, որ նրա անկախ սուբեկտիւ գործունէութիւնը համապատասխանէ ինքնին իրերի օրէնքներին: Այդ «ծնաօլօգիական» անհիմն նախադրեալը գիտակցաբար տիրապետում է ամբողջ մարդկութեան մէջ, և նա ոչ կասկածում է այդ նախադրեալի վրայ, ոչ գիտակցում նրա ամբողջ անհեթեթութիւնը: Նախասահման ներդաշնակութիւնը մի այնպիսի անհաւանական հրաշք է, որ ոչ կարելի է հերքել, ոչ ապացուցել, ուստի հէնց այդ պատճառով մնում է իմացաբանութեան խորհրդածութիւններից դուրս: Թէև «դա խիստ դիւրին, բայց մակերևութային միջոց է, որին ապաստանելով իմացաբանութիւնը՝ կարող է ազատուել իր առաջ ծագող դժուար և բարդ հարցերից» (Վինդելբանդ): Մենք տեսական փիլիսոփայութեան մէջ երբեք գործ էլ չունինք, թէ կայ այլ իրականութիւն երևոյթներից դուրս: Երևոյթներն իրենք իրենց բացատրելու համար բաւական են, և կարիք չկայ ոտնակոխ անելու մեր իմացութեան սահմանները և նրան համեմատելու մի այլ իրականութեան հետ և այդ այլ իրականութեամբ բացատրելու մեր իրականութիւնը:

Ժամանակի և տարածութեան *apriori* հայեցողութիւն լինելուց բխում է, որ նրանք ոչ միայն ներքին և արտաքին զգայութեանց ձևերն են, և ունին «էմպիրիկ ռէալականութիւն և տրանսցենդենտալ իդէալականութիւն», այլ նաև այն, որ ամէն ինչ, որ երևում է ժամանակի և տարածութեան մէջ, ոչ թէ ինքն ըստ ինքեանն է, այլ երևոյթ: Արտաքին զգայական աշխարհը մեր պատկերացումներն են. արդեօք դրանց համապատասխանում են ինքնին իրեր և ինչ յատկութիւններ ունին նոքա, — այդ մենք չենք կարող իմանալ, և մեզ չի էլ վերաբերում:

Իմացաբանական խորհրդածութեանց հէնց այս առաջին քայլում մետափիզիկաներից ամենագուհիկն է մատե-

րիալիզմը: Վերջինս ընդունում է արտաքին զգայութեան աշխարհը իբրև ինքն ըստ ինքեան իրականութիւն և անմիջապէս ձեռնարկում է նրա օրէնքներն ուսումնասիրելու: Այն ինչ այժմ նիւթական կոչուած աշխարհը իր ամբողջ նկարագրով սուբեկտիւ պատկերացումների օրինակարդուած սիստեմի է շուռ տրւում:—մատերիալիզմը շուռ է տրւում իդէալիզմի: Ահա թէ ինչո՞ւ շատերի կարծիքով, որ խիստ ճշմարիտ է, Կանտից յետոյ մատերիալիզմը անախրոնիզմ է:

Սակայն սպիրիտուալիզմն ևս զերծ չի մնում մատերիալիզմի վիճակից: Նա կարծում է, թէ հոգին հէնց այնպէս էլ ինքն ըստ ինքեան գոյութիւն ունի, ինչպէս նա ժամանակական յաջորդականութեամբ հանդէս է գալիս մեր գիտակցութեան մէջ: Այդ ճիշտ չէ, որովհետև ժամանակը, որով մենք դասաւորում ենք մեր հոգեկան վիճակները, բանականութեան պատկերացողութեան *apriori* ձևն է. մեր հոգեկան վիճակները ոչ այլ ինչ են, բայց եթէ երևոյթներ ժամանակի մէջ: Ուրեմն մենք մեզ ըմբռնում ենք ոչ թէ այնպէս, ինչպէս ըստ ինքեան գոյութիւն ունինք, այլ այնպէս, ինչպէս երևում ենք մեզ. իսկ թէ այդ երևոյթներին համապատասխանում է մի ըստ ինքեան հոգի՝ իբրև պատճառ և կրող այդ երևոյթների, այդ միշտ կմնայ պրօբլեմատիկ:

Այսպիսով «տրանսցենդենտալ էստետիկան» յանգեց բացարձակ ֆենոմենալիզմին՝ իմացաբանական խորհրդածութիւնների հիմամբ:

Տրանսցենդենտալ էստետիկայի դրած հարցերը լուծուեցին. — ժամանակի և տարածութեան *apriori* զգայական հայեցողութեան ձև լինելովը հիմնաւորուեց մատեմատիկան և ապահովուեց նրա գոյութեան իրաւացիութիւնը. այնուհետև արտածուեց դրանից ֆենոմենալիստական հետևանքներ:

Սակայն մեր իմացական կարողութիւնը չի սպառնում միայն հայեցողութեամբ. մենք ունինք նաև միտք (*разсудокъ*, *verstand*), որի իմացաբանական վերլուծու-

թեամբ և քննութեամբ զբաղուած է, «Տրանսցենդենտալ լոգիկայի» առաջին մասը՝ «Տրանսցենդենտալ Անալիտիկան», որին պիտի անցնենք այժմ։

(շարունակելի)

Յ. Յ.

ԲԵԼԴԻԱՅՈՒՄ ԵՒ ՀՈՒԼԱՆԴԻԱՅՈՒՄ

ՃԱՆԱԳԱՐ ՀՈՐԴԱԿԱՆ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ն ա խ ա բ ա ն .

Քաղաքակրթութեան առաջացման ու զարգացման մէջ դեր են խաղում բաղմապիսի պատճառներ, զործօններ, որոնցից մէկն է և հաղորդակցութիւն-յարաբերութիւնը։ Այս զործօնի դերը քաղաքակրթութեան մէջ բաւական նշանակալից է։ Եթէ մի ամենաթուցիկ, թեթեւ հայեացք անդամ ձգենք մարդկութեան անցեալի վրայ և հետեւենք քաղաքակրթութեան զարգացման ընդհանուր ընթացքին, ամեն քայլափոխում կը տեսնենք, թէ որպիսի նշանակալից, ներգործական դեր է խաղում հաղորդակցութեան-յարաբերութեան զործօնը քաղաքակրթութեան մէջ։

Քաղաքակրթութիւնը սերտ առնչութեան մէջ է հաղորդակցութեան-յարաբերութեան հետ։ Որտեղ հաղորդակցութիւն-յարաբերութիւն կայ, այնտեղ էլ քաղաքակրթութիւնը առաջ է գնում, զարգանում։ Իսկ որտեղ այդ չը կայ կամ շատ սահմանափակ է, այնտեղ էլ քաղաքակրթութիւնը խղճուկ լծադամ վիճակի մէջ է։

Քաղաքակրթութիւնը նոյն իսկ իւր ամենասկզբնական վիճակի մէջ, մի ցեղի, ժողովրդի զործ չէ, այլ նա առաջանում ու զարգանում է ցեղերի, ազգերի միացած աշխատանքով, փոխադրեցութեամբ՝ միմեանց հետ ունեցած հաղորդակցութեան-յարաբերութեան շնորհիւ։ Հէնց ներկայ եւրոպական կոչուած քաղաքակրթութիւնը, որը հետզհետէ ծաւալում է ամբողջ երկրագնդի վրայ, արդիւնք է համայն մարդկութեան միացած աշխատանքի, զործունէութեան։ Նրա սկիզբը, հիմքերը պէտք է որոնել Ասիայում և Աֆրիկայում։ Համաշխարհային պատմութեան ընդհանուր ընթացքը, քաղաքակրթութեան աստիճանական զարգացումը այդ է վկայում։ Ներկայ կամ եւրոպական քաղաքակրթութիւնը ժառանգութիւն է ասիական, աֆրիկական ժողովուրդների, որը եւրո-